

Արձանագրություն N 2

ՀՀ ԱԺ մայթերի և եզրաքարերի ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԳՀԱՇՁԲ-23/5 ծածկագրով ընթացակարգի /այսուհետ՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան, Մ. Բաղրամյան 19

11.05. 2022թ.

Ժամը՝ 15:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Վ.Թորոսյան

Հանձնաժողովի անդամներ՝

Լ. Լևոնյան, Վ. Մամբրեյան, Ա. Խուրդինյան, Ն. Հարությունյան,

Տ. Բաղայան

Հանձնաժողովի քարտուղար՝

Ռ. Հովհաննիսյան

Նախագահը (նիստը նախագահողը) նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված Ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայության գինը՝ մեկ թվով արտահայտված:

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գնվելիք ծառայությունների գինը (ՀՀ դրամ)
1	մայթերի և եզրաքարերի ընթացիկ նորոգման աշխատանքներ	2421941

1 Տեղեկություն՝ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

Հայտերը բացվել են էլեկտրոնային գնումների Armeps /www.armeps.am/ համակարգի միջոցով 2023 թվականի մայիսի 11-ին ժամը 15:30-ին:

2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.

11.05.2023թ. կայացած նիստում Հանձնաժողովը արձանագրեց, որ Ընթացակարգին ոչ մի հայտ չի ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

3. Տեղեկություններ հրավերով սահմանված կադարվելիք աշխատանքների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

4. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին


Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել

5. Ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ

Ղեկավարվելով Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց
Ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի
նախագահ՝




Վ. Թորոսյան


անդամներ՝



Լ. Լևոնյան



Վ. Մամբրեյան



Ա. Խուդինյան




Ն. Հարությունյան



Տ. Բադալյան

Քարտուղար՝



Ռ. Հովհաննիսյան

